# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

*0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771* www.court.am

**N ԴԴ-1-Ե** ԴԴ-4028 Ն-7308

**«** 19 **» սեպտեմբերի 2025թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**
**ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

**Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարի**
**19.09.25թ. թիվ 01/8/20993-2025 գրության**

***Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,***

Տեղեկացնում եմ, որ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների համար Ֆինանսների նախարարության առաջարկած չափաքանակները 2026 թվականին կարող են հանգեցնել դատական համակարգի բնականոն գործունեության խաթարմանը, ուստի հիմքում ունենալով ՀՀ վարչապետի մոտ 2025 թվականի սեպտեմբերի 9-ին կայացած խորհրդակցության թիվ Վ/135-2025 արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետով բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող մարմինների ղեկավարներին ուղղված առաջարկությունը, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի 2025 թվականի մայիսի 12-ի նիստի արձանագրությունից քաղվածքը՝ առաջարկվում է անփոփոխ թողնել Բարձրագույն դատական խորհրդի 03.03.2025թ. թիվ ԲԴԽ 16-Ո-25 որոշմամբ հաստատված Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2026 թվականի բյուջետային հայտը:

Միևնույն ժամանակ, ելնելով վերոնշյալ արձանագրության 3.1.1 կետով ներկայացված առաջարկությունից՝ ներկայացվում է Ֆինանսների նախարարության առաջարկած չափաքանակներից ավել ներկայացված ծախսերի մասով 2026 թվականի ժամանակահատվածում առաջնահերթությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որը ներառում է հետևյալը.

1.1. **Դատական համակարգի աշխատանքի վարձատրության գծով դեֆիցիտի ծածկում** – հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքի վարձատրության ֆոնդը հաշվարկված է ըստ գործող հաստիքների, հաստիքները զբաղեցնող անձանց ստաժերի, ապա 2026 թվականի համար աշխատանքի վարձատրության մասով թերֆինանսավորումը կխաթարի դատական համակարգի բնականոն գործունեությունը:

1.2. **Դատական համակարգի փոստային ծառայությունների գծով դեֆիցիտի ծածկում** – մինչև հանրապետությունում փոստային ծառայություններին այլընտրանք հանդիսացող ծանուցումների էլեկտրոնային համակարգի ներդնումը փոստային ծառայությունների գծով ծախսերի կրճատումն անհնարին կդարձնի դատական համակարգի բնականոն գործունեությունը (օրինակ՝ ինչպես 2025 թվականին):

1.3. **Բարձրագույն դատական խորհրդի տեխնիկական հագեցվածության բարելավում** – դատական համակարգի բնականոն և արդյունավետ աշխատանքը հնարավոր է ապահովել միայն համապատասխան տեխնիկական հագեցվածության պայմաններում:

1.4. **Դատական համակարգի շենքային պայմանների բարելավում**

1.4.1. **ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Իջևան քաղաքի նստավայրի վարչական շենքի վերակառուցում և վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում** – ՀՀ ՆԳՆ «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ դատարանի շենքի հետագա բնականոն և անվտանգ շահագործումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է հրատապ իրականացնել ամրացման աշխատանքներ, որի վերաբերյալ Դատական դեպարտամենտի Վարչապետի աշխատակազմի, Արդարադատության նախարարության, Քաղաքաշինության կոմիտեի և ֆինանսների նախարարության միջև գրագրության պատճենները կցվում են: Ուստի շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումից հետո անհրաժեշտ կլինի հրատապ ձեռնամուխ լինել շենքի վերակառուցման աշխատանքներին:

1.4.3. **ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառ քաղաքի նստավայրի վարչական շենքի կառուցում** - Բարձրագույն դատական խորհրդին և ՀՀ դատարաններին «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» 1080 ծրագրի 31002 միջոցառմանը (կատարող՝ Քաղաքաշինության կոմիտե) ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով հատկացվել է 425,488.0 հազ. ՀՀ դրամ: ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի և «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի հունիսի 6-ին կնքվել է թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/9 որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պետական գնման պայմանագիրը, որը 2024 թվականի ապրիլի 9-ից միակողմանի լուծվել է: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից թիվ ԵԴ2/3851/02/24 քաղաքացիական գործով տրված կատարողական թերթի համաձայն՝ Քաղաքաշինության կոմիտեին արգելվել է կատարելու որևէ գործողություն, որը բխում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի և «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/9 ծածկագրով գնման պայմանագիրը Կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից միակողմանի լուծելուց մինչև հիշյալ գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 14.05.2025թ. թիվ ԵԴ2/3851/02/24 որոշմամբ «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել է՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 05.08.2024 թվականի վճիռը բեկանել, փոփոխել և հայցադիմումը բավարարել է, անվավեր է ճանաչել «ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Անտոնյանի 22.04.2024 թվականի որոշումը: Վերը նշված որոշումը ուժի մեջ է մտել 15.05.2025 թվականից և կարող էր բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան հրապարակման պահից 15-օրյա ժամկետում, սակայն 19.09.2025թ.-ի դրությամբ Վճռաբեկ դատարանում սույն գործով վճռաբեկ բողոք առկա չէ, և քանի որ ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի նստավայրի նոր վարչական շենքի շինարարությունն արդեն սկսված է և չի կորցրել իր արդիականությունը, ուստի 2026 թվականին կառաջանա պետական բյուջեից հատկացման պահանջ:

Առդիր՝ 1 էլեկտրոնային նիշք:

***ՀԱՐԳԱՆՔՈՎ՝***

**ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ**

Կատ.՝ ֆինանսաբյուջետային վարչություն
Հեռ.՝ /+37410/ 511790, 511789

2026 թվականի ժամանակահատվածում առաջնահերթությունները՝ ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների

| | ԲԳԿ/Միջոցառում | Գումարը (հազար դրամներով) |
|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ | **2,788,071.8** |
| 1 | **ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդ** | **2,788,071.8** |
| 1.1 | Դատական համակարգի աշխատանքի վարձատրության գծով դեֆիցիտի ծածկում | 1,090,409.7 |
| 1.2 | Դատական համակարգի փոստային ծառայությունների գծով դեֆիցիտի ծածկում | 618,874.1 |
| 1.3 | Բարձրագույն դատական խորհրդի տեխնիկական հագեցվածության բարելավում | 100,000.0 |
| 1.4 | Դատական համակարգի շենքային պայմանների բարելավում | 978,788.0 |
| 1.4.1 | ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Իջևան քաղաքի նստավայրի վարչական շենքի վերակառուցում | 530,000.0 |
| 1.4.2 | ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Իջևան քաղաքի նստավայրի վարչական շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում | 23,300.0 |
| 1.4.3 | ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառ քաղաքի նստավայրի վարչական շենքի կառուցում | 425,488.0 |